

տանցիներ, չկրնալով պահել՝ իբրև իրենց զաւակը՝ իրենց ամօթին ու ստրկութեան այդ ցաւազին ու կենդանի ապացոյցը, բայց եւ միտքերէն խզ չանցնելով անոր մէջ մազին զբաշիւ, զայն զրկած են՝ զողունի՝ գիւղին եկեղեցւոյն դուռը կախելու, իբր որք, իբր դժբաղդ անծանօթ մը որ հայր մայր չունի, որպէս զի բարի անցորդը զայն որդեգրէ՝ առանց գիտնալու անոր ով կամ ուրկինք ըլլալը :

Ա. ԶՊՊԱՆԵԱՆ

Թ. Գ. — Անահիտի այս թիւին մէջ նրատարակեցի վերջին մասը Ստեփան Փոփազեանի յուշատետրին, որուն առաջին մասերը ըլլաւ տեսած են այս թերթին նախորդ տարիներուն մէջ : Տեղի պակասը զիս կը ստիպէ յաջորդ թիւին թողուլ այդ յուշատետրին առթիւ գրած յօդուածիս նրատարակումը :



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ
ՆՈՒԱԿԱՀԱՆԳԷՍ ՄԸ

Ապրիլ 16ի իրիկունը, Փէլէլի սրահին մէջ սեղի ունեցաւ ժողովրդական երաժշտութեան նուագանդան մը, զոր կուսային Սր. Մ. Բաբայեան եւ Տիկին Շ. Բաբայեան-Լալուա : Օր. Մ. Բաբայեան երգեց հայկական, ֆրանսական, յունական եւ ռուսական ժողովրդական երգեր քրահի չափ, եւ տիկին Շ. Բ.-Լալուա դաշնակի վրայ անցեց այդ չորս ազգերու պարի եզանակներ :

Ունկնդիրները, որ՝ մեծ մասամբ նրախրեալ Եւրոպացիներ էին, չկրմ ընդունելութիւն մ'ըրին երկու տաղանդաւոր արուեստագիտուհիներուն : Մասնաւորապէս յաջողութիւն գտան հայկական եզանակիները . քննադատական յօդուածները որ երեսցան երաժշտական մամուլին մէջ, մեծ համակրութեամբ կը խօսին անոնց մասին : Գ. Լուի Լալուա հմտալից բանաստեղծ

ւթեամբ մը բազդատական ուսումնասիրութիւն մ'ըրաւ այդ չորս ազգերու ժողովրդական երաժշտութեան : Բաբայեան քոյրերը, նուագանդանդանին հետքը, 50 Ֆր., յանձնեցին Փարիզի Հայկական Միութեան, Հայ սովետներուն ու զարկուելու համար :



ԱԼԵԲԱՆԵԱՆ ՆՈՒԱԿԱՀԱՆԳԷՍԸ

Մայիս 15ի իրիկունը, Տիրան Ալեքսանեան նուագանդան մը առաւ Պերլիօզ սրահին մէջ, աջակցութեամբ Տիկին Մոնթէօ-Պարիէրի, ԳԳ. Տրվրէտի, Շառլ Լըվառէի եւ Անտրէ Կայնարի, եւ գտաւ ընդ սովորականին՝ փայլուն յաջողութիւն մը :



ՀԱՅ ԱՇԽԱՏԱԻՈՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀԱՅԿԵՐՈՅԸ

Մայիս 4ի իրիկունը, Ռեսթորան աը Փարիի սրահներէն մէկուն մէջ, Փարիզի Հայ Աշխատաւորաց Միութեան անդամները հացկերոյթով մը տօնեցին զատկական հիթու մը : Հացկերոյթէն յետոյ, նանգանակութիւն մը ըրին ի նպատակ թրքահայաստանի սովետներուն . գումարը՝ 80 Ֆրանք՝ յանձնեցին Փարիզի Հայոց Հոգաբարձութեան :



Le Gérant : FRÉDÉRIC MACLEIN
Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, l'aris.